ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.01.01-9

«30 » _01_ 2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Ի. Ավետիսյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» ծրագրի շրջանակներում Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի միջին տարեկան 45 սովորողների սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 09.03.01.01 <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում>> ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում:

2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է մինչև 14785000 (տասնչորս միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3 ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Հանրապետական թիվ 2 հատուկ
ք. Երևան, Վ. Սարգսյան 3	կրթահամալիր» ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ գործառնական վարչության	ք. Երևան, Ռաֆֆու 113
հ/հ 900011005452	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Նախարարության գլխավոր քարտուղար	հ/հ 900018002999
---------- Ն. Հարությունյան	Տնօրեն ---------- Ի. Ավետիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ